

<b>ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ</b>	
<b>Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը</b>	<b>«ՄԱՍՆԱԳԵՏ՝ ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ»</b>
<b>I. Դերը</b>	<p>«Մասնագետ՝ հրդեհային պաշտպանության» որակավորմամբ մասնագետը իրականացում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ հրդեհներից անձի, գույքի, հասարակության ու պետության պաշտպանություն,</li> <li>✓ հրդեհային անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ,</li> <li>✓ հրդեհների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ,</li> <li>✓ հրշեջ-փրկարարական աշխատանքների իրականացում և առաջին օգնություն ցուցաբերում,</li> <li>✓ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներ:</li> </ul>
<b>II. Խնդիրների բնագավառները</b>	
<b><u>Խնդիրների բնագավառ 1.</u></b>	<b>Հրդեհաշիջման, փրկարարական, վթարափրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում և իրականացում</b>
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Կատարում է հրդեհի վայրի հետախուզություն, կազմակերպում է հրդեհի վտանգավոր գործոններից մարդկանց պաշտպանությունն ու տարահանումը վտանգավոր տեղամասերից:</li> <li>2. Իրականացնում է արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներ:</li> <li>3. Կատարում է հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքներ, ցուցաբերում է առաջին օգնություն:</li> <li>4. Հրդեհների ընթացքում ընտրում է փրկարարական աշխատանքների իրականացման հնարքներն ու ձևերը:</li> <li>5. Հրդեհաշիջման, փրկարարական, վթարափրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները կանոնակարգող իրավական ակտերի համաձայն իրականացնում է. <ul style="list-style-type: none"> <li>✓ փոխհամագործակցություն հրդեհաշիջման աշխատանքներում ներգրավված ստորաբաժանումների և ծառայությունների հետ,</li> <li>✓ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներ:</li> </ul> </li> </ol>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Կատարել է հրդեհի վայրի հետախուզություն, կազմակերպել է հրդեհի վտանգավոր գործոններից մարդկանց պաշտպանությունն ու</li> </ol>

	<p>տարհանումը վտանգավոր տեղամասերից:</p> <ol style="list-style-type: none"> <li>2. Իրականացրել է արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքները:</li> <li>3. Հրդեհների ընթացքում ընտրել է հրշեջ-փրկարարական աշխատանքների ձևերը:</li> <li>4. Իրականացրել է հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքներ, ցուցաբերել է առաջին օգնություն:</li> <li>5. Հրդեհաշիջման, փրկարարական, վթարափրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները կանոնակարգող իրավական ակտերի համաձայն իրականացրել է. <ul style="list-style-type: none"> <li>✓ փոխհամագործակցություն հրդեհաշիջման աշխատանքներում ներգրավված ծառայությունների հետ,</li> <li>✓ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներ:</li> </ul> </li> </ol>
<b><u>Խնդիրների բնագավառ 2.</u></b>	<b>Հրդեհաշիջման օպերատիվ պլանների և քարտերի մշակում</b>
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Հավաքագրում է կազմակերպությունների վերաբերյալ բնութագրական տվյալներ:</li> <li>2. Որոշում է հնարավոր հրդեհի առաջացման վտանգավոր տեղամասը:</li> <li>3. Որոշում է հրդեհաշիջման վճռական ուղղությունը:</li> <li>4. Հաշվարկում է հրդեհաշիջման ուժերը և միջոցները:</li> <li>5. Մշակում է հրդեհաշիջման օպերատիվ պլաններ և քարտեր:</li> </ol>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Հավաքագրել է կազմակերպությունների վերաբերյալ բնութագրական տվյալներ:</li> <li>2. Որոշել է հնարավոր հրդեհի առաջացման վտանգավոր տեղամասը:</li> <li>3. Հաշվարկել է հրդեհի մեկուսացման և մարման համար անհրաժեշտ ուժերն ու միջոցները:</li> <li>4. Կանխել է հրդեհի վտանգավոր զարգացումները:</li> <li>5. Հրդեհաշիջման ղեկավարին ներկայացրել է առաջարկություններ հնարավոր հրդեհի արդյունավետ մարման վերաբերյալ:</li> </ol>
<b><u>Խնդիրների բնագավառ 3.</u></b>	<b>Հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների մարտավարական հնարավորությունների գնահատում</b>
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Գնահատում է խմբի և օղակի մարտավարական հնարավորությունները:</li> <li>2. Լուծում է հրդեհաշիջման մարտավարության խնդիրները:</li> </ol>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Գնահատել է խմբի և օղակի մարտավարական հնարավորությունները:</li> <li>2. Ջրաղբյուրի բացակայության դեպքում, հաշվարկել է ջրային և փրփրային փողակների աշխատանքի տևողությունը:</li> </ol>

	<ol style="list-style-type: none"> <li>3. Հաշվարկել է ջրի ծավալը հրշեջ փողրակներում:</li> <li>4. Հաշվարկել է ջրի ճնշման կորուստը հրշեջ փողրակներում:</li> <li>5. Հաշվարկել է կրակմարող նյութերը հրդեհի օջախ մղելու առավելագույն հեռավորությունը:</li> <li>6. Գծել է կրակմարիչ նյութերի մղման սխեմաները:</li> </ol>
<b><u>Խնդիրների բնագավառ 4.</u></b>	<b>Հրշեջ-փրկարարական ջոկատի հերթափոխային ծառայության կազմակերպում</b>
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ընդունում է մարտական հաշվարկում գտնվող հրշեջ-փրկարարական ավտոմեքենաները, գույքն ու սարքավորումները:</li> <li>2. Հրդեհաշիջման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ավարտից հետո, իրականացնում է ավտոմեքենաների և տեխնիկայի սպասարկումն ու դրանք դնում մարտական հաշվարկի:</li> <li>3. Կազմակերպում է հրշեջ-փրկարարական ջոկատի ներքին վերակարգի ծառայությունը:</li> <li>4. Հրշեջ-փրկարարական գույքն ու սարքավորումները /սարքին վիճակում/ հանձնում է փոխարինող խմբին:</li> </ol>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ընդունել է մարտական հաշվարկում գտնվող հրշեջ-փրկարարական ավտոմեքենաները, գույքն ու սարքավորումները:</li> <li>2. Իրականացրել է հրդեհաշիջման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները:</li> <li>3. Կազմակերպել է հրշեջ-փրկարարական ջոկատի ներքին վերակարգի ծառայությունը:</li> <li>4. Հրշեջ-փրկարարական ավտոմեքենաներն ու տեխնիկան հանձնել է հերթափոխը ընդունող խմբին:</li> </ol>
<b><u>Խնդիրների բնագավառ 5.</u></b>	<b>Հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների, գույք-սարքավորումների սպասարկում և շահագործում</b>
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Իրականացնում է հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների, գույք-սարքավորումների սպասարկում և շահագործում:
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ճիշտ է տեղադրել գույք-սարքավորումները հրշեջ ավտոմեքենաներում:</li> <li>2. Լրացրել է հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների, գույք-սարքավորումների շահագործման անձնագրերը և քարտերը:</li> <li>3. Կատարել է հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների տեխնիկական զննություն:</li> <li>4. Փորձարկել է հրշեջ գույքն ու սարքավորումները:</li> </ol>
<b><u>Խնդիրների բնագավառ 6.</u></b>	<b>Հրդեհների կանխարգելմանն ուղղված աշխատանքների իրականացում</b>

<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Վերլուծում է օբյեկտներում և բնակավայրերում հրդեհների հետ կապված իրավիճակը:</li> <li>2. Իրականացնում է հրդեհների և վթարների հաշվառում:</li> <li>3. Իրականացնում է հակահրդեհային քարոզչություն:</li> <li>4. Հավաքագրում է տեղուկությունները և մշակում հաշվետվությունները:</li> </ol>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Կատարել է հրդեհների հաշվառում, վերլուծություն:</li> <li>2. Կազմակերպություններում իրականացրել է հակահրդեհային քարոզչություն:</li> <li>3. Արձանագրել է օբյեկտներում հայտնաբերված հակահրդեհային թերությունները:</li> <li>4. Հավաքագրել է տեղուկությունները և մշակել հաշվետվությունները:</li> </ol>
<b><u>Խնդիրների բնագավառ 7.</u></b>	<b>Փրկարարական գույքի, սարքավորումների և փոքր մեխանիզացիայի միջոցների կիրառում</b>
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Իրականացնում է փրկարարական գույքի, սարքավորումների և փոքր մեխանիզացիայի միջոցների սպասարկում և վերանորոգում:</li> <li>2. Իրականացնում է փրկարարական փոքր մեխանիզացիայի միջոցների անսարքությունների վերացում:</li> <li>3. Տեղադրում է փրկարարական գույքը, սարքավորումները և փոքր մեխանիզացիայի միջոցները ավտոմեքենաներում՝ ըստ դասավորվածքի:</li> </ol>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Իրականացրել է փրկարարական գույքի, սարքավորումների և փոքր մեխանիզացիայի միջոցների սպասարկում և վերանորոգում:</li> <li>2. Վերացրել է փրկարարական փոքր մեխանիզացիայի միջոցների անսարքությունները:</li> <li>3. Տեղադրել է փրկարարական գույքը, սարքավորումները և փոքր մեխանիզացիայի միջոցները ավտոմեքենաներում՝ ըստ դասավորվածքի:</li> </ol>
<b><u>Խնդիրների բնագավառ 8.</u></b>	<b>Արտակարգ իրավիճակի վայրում փրկարարական աշխատանքների կատարում</b>
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Իրականացնում է արտակարգ իրավիճակի վայրի հետախուզություն:</li> <li>2. Իրականացնում է որոնողափրկարարական աշխատանքներ:</li> <li>3. Կատարում է լեռնափրկարարական աշխատանքներ:</li> <li>4. Իրականացնում է բարձրությունների վրա փրկարարական աշխատանքներ:</li> <li>5. Իրականացնում է ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում փրկարարական աշխատանքներ:</li> </ol>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Կատարել է արտակարգ իրավիճակի վայրի հետախուզություն և զեկուցել տվյալները:</li> </ol>

	<ol style="list-style-type: none"> <li>2. Կատարել է տեխնիկական սարքավորումներով որոնողական աշխատանքներ:</li> <li>3. Կիրառել է լեռնափրկարարական աշխատանքներում անհրաժեշտ միջոցները:</li> <li>4. Լեռնային տարբեր լանդշաֆտներում ու ժայռերում, տուժածներին ցուցաբերել է անհետաձգելի օգնություն ու իրականացրել տեղափոխում:</li> <li>5. Իրականացրել է բարձրությունների վրա փրկարարական աշխատանքներ, կիրառելով փրկարարական պարանները, սարքերը և անվտանգության համակարգերը:</li> <li>6. Իրականացրել է ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում փրկարարական աշխատանքներ՝ պահպանելով աշխատանքի անվտանգության պայմանները:</li> </ol>
<b><u>Խնդիրների բնագավառ 9.</u></b>	<b>Հրդեհաշիջման, փրկարարական, վթարափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տուժածներին առաջին օգնության ցուցաբերում</b>
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Հրդեհաշիջման, փրկարարական, վթարափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տուժածներին ցուցաբերում է առաջին օգնություն:
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. ԱԻ գոտում իրականացրել է տուժածի (տուժածների) վիճակի գնահատում, անվտանգության ապահովում:</li> <li>2. Իրականացրել է տուժածի (տուժածների) շտապ դուրս բերումը արտակարգ իրավիճակի գոտուց, վտանգավոր տարածքից:</li> <li>3. Ցուցաբերել է առաջին օգնություն ըստ տուժածի վիճակի, առկա վնասվածքի և ախտահարման:</li> <li>4. Իրականացրել է տուժածի (տուժածների) պատգարակում ու տեղափոխում:</li> </ol>
<b>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/</b>	<p>Հրդեհային պաշտպանության մասնագետը պատասխանատու է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. իրեն ենթակա ստորաբաժանման մարտական պատրաստության, ծառայողական առաջադրանքների կատարման, անձնակազմի պատրաստության, դաստիարակության, կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի, խմբում ներքին կարգ ու կանոնի պահպանման, հատուկ տեխնիկայի և այլ գույքի վիճակի համար,</li> <li>2. ստորաբաժանման անձնակազմի հետ պարապմունքների անցկացման,</li> <li>3. գործնական պարապմունքների և հրշեջ-փրկարարական աշխատանքների կատարման ժամանակ անձնակազմի կողմից անվտանգության կանոնների պահպանման համար,</li> </ol>

	<p>4. հրշեջ-փրկարարական տեխնիկայի, գույք-սարքավորումների ճշգրիտ շահագործման, փորձարկման և պահպանման համար,</p> <p>5. ջոկատում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման, մաքրության, անձնակազմի շարային կեցվածքի, սահմանված հանդերձանքի ճիշտ կրման համար,</p> <p>6. իրեն ենթակա ստորաբաժանումում սոցիալական արդարության, փոխադարձ վստահության համար,</p> <p>7. ստորաբաժանման օպերատիվ ծառայողական գործունեության համար:</p>
<b>IV. Լեզուները</b>	<p>Հայոց լեզու – լավ</p> <p>Առաջին օտար լեզու – քավարար</p> <p>Երկրորդ օտար լեզու - քավարար</p>
<b>V. Համակարգիչը</b>	<p>MS office- քավարար</p> <p>Համացանցից օգտվել- քավարար:</p>
<b>VI. Գիտելիքները</b>	<ul style="list-style-type: none"> <li>✓ Մասնագիտական քիմիայի հիմունքներ,</li> <li>✓ Էլեկտրատեխնիկայի հիմունքներ,</li> <li>✓ հրդեհաշիջման մարտավարության հիմունքներ,</li> <li>✓ այրման և պայթյունի տեսություն,</li> <li>✓ հրդեհային կանխարգելում,</li> <li>✓ հրդեհային անվտանգության ոլորտը կարգավորող իրավական ակտեր:</li> </ul>
<b>VII. Կարողությունները և հմտությունները</b>	<ul style="list-style-type: none"> <li>✓ Արտակարգ իրավիճակներում կողմնորոշման կարողություն,</li> <li>✓ հրդեհաշիջման մարտավարման կարողություն,</li> <li>✓ հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների մարտավարական հնարավորությունների գնահատման կարողություն,</li> <li>✓ հրդեհի ժամանակ ուժերի և միջոցների ներգրավման և կենտրոնացման կարողություն,</li> <li>✓ հրշեջ-փրկարարական տեխնիկայի կիրառման կարողություն,</li> <li>✓ ուժերի և միջոցների հաշվարկման կարողություն,</li> <li>✓ կրակմարիչ նյութերի կիրառման կարողություն,</li> <li>✓ հրդեհների մարման կարողություն,</li> <li>✓ շնչառության համար ոչ պիտանի միջավայրում աշխատելու կարողություն,</li> <li>✓ հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների շահագործման ու սպասարկման կարողություն,</li> <li>✓ հրշեջ-փրկարարական գույք-սարքավորումների շահագործման ու սպասարկման կարողություն,</li> <li>✓ հրշեջ-շարային պատրաստության նորմատիվների կատարման</li> </ul>

	<p>կարողություն,</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ հերթափոխային ծառայության կազմակերպման կարողություն,</li> <li>✓ կապի միջոցներից օգտվելու և հաղորդակցվելու կարողություն,</li> <li>✓ հրդեհային անվտանգության կանոնների պահանջների խախտումների հայտնաբերման կարողություն,</li> <li>✓ հրդեհների հետագոտման ու հետաքննության իրականացման կարողություն,</li> <li>✓ հաշվետվությունների կազմման ու ներկայացման կարողություն,</li> <li>✓ փոքր մեխանիզացիայի միջոցների շահագործման կարողություն,</li> <li>✓ որոնողափրկարարական աշխատանքների իրականացման կարողություն,</li> <li>✓ լեռնափրկարարական աշխատանքների իրականացման կարողություն,</li> <li>✓ բարձրությունների վրա փրկարարական աշխատանքների իրականացման կարողություն,</li> <li>✓ տրանսպորտային պատահարների դեպքում, փրկարարական աշխատանքների իրականացման կարողություն,</li> <li>✓ առաջին օգնության ցուցաբերման կարողություն:</li> </ul>
<p><b>VIII. Անձի որակական հատկանիշներ</b></p>	<p>Կարգապահ, ճշտապահ, պարտաճանաչ, աշխատասեր, համբերատար, հանդուրժող, հավասարակշռված, թիմային աշխատանքի հակված, օբյեկտիվ, ընկերասեր:</p>